# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 07 » հուլիսի 2026թ. N ՄՈ/387-Ա

ք. Արմավիր

**«ԼՈՒԿԱՇԻՆԻ ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի հուլիսի 3-ի ՄՈ/369-Ա որոշումը՝ «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Թ. Մկրտչյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Անահիտ Արոյանին (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովի նախագահին (Թ. Մկրտչյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 2509720032 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ

2026 թվականի հուլիսի 07-ի
N ՄՈ/387 -Ա որոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Թ.Մկրտչյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

**Անդամներ՝**

Ա. Պետրոսյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ջ. Եղոյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**
Դ" Գաբրիելյան — «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականություններ կատարող

**Ընդունող՝**

Ն. Խաչատրյան — «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ